

-ՄԵՆՅՈՒԿ, կ'ուզեմ, որ մեր ազգին աղքատը յիմար-յիմար ֆեու ու ֆեուն չի վազէ, ծոյլ-ծոյլ չի նստի ու չի մաշեցնէ իր շնորհքը: Թող խելօք կոյնի ու մտածէ գործի, յառաջդիմութեան մասին:

*

ԱՄԵՆ Ակնցի ծնած է Փետրուար 29ին: Սկրտուած է Փետրուար 29ին: Ու կը մեռնի Ակնցին միշտ Փետրուար 29ին: Ու այսպէս, իր բոլոր տարեդարձները կը կատարէ չորս տարին անգամ մը, եթէ, անշուշտ, յարմար տեսնէ:

Ակնցին եթէ մԷկուն հետ թշնամանայ, եգ ուղտ մը կը գնէ եւ անոր կեր կուտայ՝ ուղտի կաթով սնանելու համար: Շատ կը սիրէ նաեւ հնդկահաւի հաւկիթը, ինչպէս նաեւ՝ սիրամարգին ձուերը:

Ակնցիին ճաշասեղանին վրայէն անցնող մրջիւնը իր ձեռքը պէտք է ունենայ բարի վարուց վկայական մը եւ երթունարձի անցագիր մը: Եւ որովհետեւ մրջիւնները գործ չունին այդ կարգի թուղթերու հետ, աղետի կը հանդիպին Ակնցիին ճաշասեղանին վրայէն իրենց փշրանք մը առած ժամանակը: Փշրանքի մասին մտածող մեր Ակնցին, սակայն, մերթ ընդունակ է ազգաշէն առատածեռնութեան:

Տիգիբական ուժի չիտտեւող Ակնցին իր մԷջ ունի կրկէս մը, որուն վրայ կ'ըմբշամարտին գործի մարդը եւ բանաստեղծը: Պայքարէն միշտ վիրաւոր դուրս ելլողը քերթողն է: Անոր սրտէն յարատեւօրէն կը վազէ արիւնը: Ահա թէ ի՞նչու իր երգերը խորապէս խռովիչ են:

Խորհուրդ կուտամ ամենուն՝ մտնել Ակնցիին աչքը: Ճամբան գիտնալու է սակայն: Կարելի է անցնիլ իր կռնակէն, թելերէն կամ վիզէն՝ հասնելու համար իր աչքին: ՄԷկ տեղ կայ միայն, ուրկէ կարելի չէ անցնիլ. անկա իր գրպանն է: Անկէ անցնելով՝ իր աչքը մտնեմ ըսողը կը մնայ Ակնցիին... գրպանը:

Շատ բան կարելի է ըսել հայ ազգին պատկանող այս կարեւոր անդամի մասին: Մենք, սակայն, բաւ կը համարինք այսբան նկարագրականը ու խօսքը կուտանք Յրեայի մը.

-Յիթէր ու Մուսոլիսի կը հալածեն մեզ, Արաբները կը սպաննեն մեզ, միւս ազգերէն շատեր կ'ատեն մեզ: Միջնադարեան ողբերգութիւն մը կ'ապրինք: Եւ սակայն կը միսիթարուինք՝ մտածելով, որ յոռեգոյնէն դեռ շատ հեռու ենք: Պիտի ըսեք, թէ մեր այս վիճակէն